Պատասխաններ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2023-2024 ուս. տարի
11-12 դասարան

1. ա-ճիշտ; բ-սխալ; գ-ճիշտ; դ-ճիշտ; ե-ճիշտ; զ-սխալ; է-ճիշտ; ը-ճիշտ (յուր՝ **0.25միավոր**)

2. Նիդերլանդներ, Նիդերլանդների Թագավորություն: Ճիշտ համարել նաև Հոլանդիան

3. դ. ափվելլինգ

4. Գծագիրը պետք է ունենա այսպիսի կամ նմանատիպ տեսք: Բովանդակային ցանկացած սխալի դեպքում գծագրի համար **միավոր չի տրվում**: Զուտ տեխնիկական թերացումների պարագայում կարող է տրվել առավելագույնը **0.5միավոր**



ա. դրական կոռելյացիա (չափը չի պահանջվում)

բ. ձնհալքաանձրևային կամ խառը (երկու տարբերակն էլ ընդունել ճիշտ): Միայն անձրևային (սակայն ոչ մուսսոնային) նշելու դեպքում՝ 0.5միավոր

5. ա. Ա երկրում՝ 5000.000.000 x 2կվտ-ժ + 6000.000 x 3կվտ-ժ = 10.018.000.000 կվտ-ժ

Բ երկրում՝ 4000.000.000 x 2կվտ-ժ + 6000.000 x 3կվտ-ժ = 8.018.000.000 կվտ-ժ

Զուտ հաշվարկային-տեխնիկական սխալի դեպքում շնորհել առավելագույնը **0.5միավոր**: Ցանկացած բովանդակային սխալի դեպքում միավոր չի տրվում:

բ. 8000.000 x 105% : 100% = 8.400.000 մարդ

8.400.000 – 8.000.000 - 20.000 = 380.000 մարդ (**0.5միավոր**)

60.000 : 8000.000 x 100% = 0.75 (**0.5միավոր**)

Զուտ հաշվարկային-տեխնիկական սխալի դեպքում խնդրի յուրաքանչյուր բաղադրիչի համար շնորհել առավելագույնը **0.25միավոր**: Ցանկացած բովանդակային սխալի դեպքում միավոր չի տրվում:

6. ա. Հյուսիսային Կորեա (ԿԺԴՀ), Չինաստան (ՉԺՀ), Կուբա, Վիետնամ, Լաոս

բ. Միջերկրածովյան կրիա, հայկական իժ, գանգրափետուր հավալուսն, կովկասյան սապսան, սպիտակապոչ արծիվ, առաջավորասիական (կովկասյան) հովազ (ընձառյուծ)

Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ նշված պատասխանի դեպքում միավորը նվազեցնել 0.25-ով:

7. Ավստրալիա, ԱՄՆ, Ճապոնիա, Մոնակո: Յուրաքանչյուր դիրքում ճիշտ պատասխանը նշելու պարագայում աշակերտին շնորհել **0.25միավոր:**

8. ա. Կլիմայի գլոբալ փոփոխության արդյունքում հյուսիսատլանտյան ավազանում կրճատվում է սառցապատ տարածքը և ընդհանուր առմամբ աճում է ջրի ջերմաստիճանը (**0.5միավոր**): Գործընթացի առանձնահատկություններից է, որ արդյունքում հյուսիսատլանտյան ավազանում արևադարձային ցիկլոնների ձևավորման համար անհրաժեշտ նվազագույն ջերմաստիճանները ավելի երկար են պահպանվում (**0.5միավոր**): Նմանատիպ, սակայն ոչ լիարժեք մեկնաբանված պատասպանի դեպքում շնորհել առավելագույնը 0.5միավոր: Եթե աշակերտը փորձում է երևույթը մեկնաբանել Էլ-Նինյոի հաճախականության աճով՝ միավոր չի տրվում:

բ. Հիմնական պատճառներներից կարելի է նշել (յուր՝ **0.5միավոր**). 1) ՆԱԵ-ների ընթացիկ զարգացմամբ պայմանավորված՝ աշխատուժի վարձատրության չափի աճը; 2) ՆԱԵ-ների կողմից օրենսդրական որոշ խստացումները, որոնք թույլ չեն տալիս զարգացած երկրներին ցանկալի չափով կապիտալ վերադարձնել իրենց երկրներ; 3) Զարգացած երկրներում որակի նկատմամբ պահանջների բարձրացումը; 4) Քաղաքական անկայունությամբ պայմանավորված՝ այլ ռեգիոններից մատակարարումների ուշացումները; 5) Զարգացած երկրներում աշխատուժի զբաղվածության խնդիրները: Եթե պատասխանում չեն նշվում բերված հիմնական պատճառները, սակայն բերվում են երկրորդական պատճառներ՝ յուրաքանչյուրի համար շնորհել 0.25միավոր:

9. ա. 2011թ.- 2007-2010թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը աշխարհում իրավիճակը դարձրել էր անկայուն, իսկ 2011թ.-ի հայտնի բնական աղետները և քաղաքական անկայունությունը, որը մասսայական գործադուլներով և վառելիքի ու նյութական արտադրանքի գնաճով արտահայտվեց նաև ԵՄ մի շարք երկրներում, հանգեցրին ներքին ջրային փոխադրումների անկման:

2018թ.-ին Եվրոպական մի շարք գետավազաններում գրանցվեց աննախադեպ սակավաջրություն, որն ազդեց ներքին ջրային տրանսպորտի վրա:

2020թ. – Կոռոնավիրուսի համաճարակով պայմանավորված տնտեսության բոլոր ոլորտներում դիտվեց ակտիվության անկում, որն ազդեց բեռնափոխադրումների վրա:

2022թ. – Ուկրաինական կոնֆլիկտով պայմանավորված ԵՄ տարածքում գրանցվեց գնաճ և բնակչության ծախսերը նվազեցին, ինչն անդրադարձավ ջրային ուղիներով բեռնափոխադրումների քանակի վրա:

բ. Ներքին ջրային տրանսպորտը համարվում է ավելի կայուն և շրջակա միջավայրի վրա քիչ ազդեցություն ունեցող տեսակ: Այն պակաս աղմուկային ֆոն է ստեղծում և քիչ է արտանետում: Ստեղծված են մեծածավալ ենթակառուցվածքներ: Ցամաքային տրանսպորտի այլ տեսակներից զգալիորեն էժան է, քանի որ նավը մեծ ծավալի բեռներ է փոխադրում: Այլ՝ երկրորդային պատճառների դեպքում շնորհել առավելագույնը 0.5միավոր:

10. ա. Ագրոկլիմայական ռեսուրսները գյուղատնտեսական արտադրությանը նպաստող և անմիջապես մասնակցող կլիմայական գործոններն են՝ լույսը, ջերմությունը և խոնավությունը **(0.25միավոր)**: Ակտիվ ջերմաստիճանների գումարը տարվա ընթացքում բույսի աճի նվազագույն անհրաժեշտ ջերմաստիճանը գերազանցող (միջին օրական) ջերմաստիճանների գումարն է **(0.25միավոր)**: Վտանգավոր ագրոկլիմայական երևույթներ են խորշակները, երաշտները, ցրտահարությունները, կարկուտը, սելավային բնույթի անձրևները և այլն **(0.5միավոր)**:

բ. ՀՆԱ-ն տվյալ տարածքում որոշակի ժամանակահատվածում (որպես օրենք՝ մեկ տարում) ստեղծված նյութերի և մատուցված ծառայությունների հանրագումարային արժեքն է՝ արտահայտած դրամով **(0.5միավոր)**: Համախառն ազգային եկամտից սկզբունքորեն տարբերվում է նրանով, որ ՀԱԵ-ն հաշվարկվում է միայն այն նյութերի ու ծառայությունների համար, որոնք արտադրվել կամ մատուցվել են տվյալ երկրի ռեզիդենտների կողմից՝ անկախ նրանց գտնվելու վայրից: Օրինակ, ՀԱԵ-ն չի ներառում օտարերկրյա ռեզիդենտների կողմից տվյալ տարածքում ստեղծած նորագույն արժեքը, իսկ ՀՆԱ-ն՝ ներառում է **(0.5միավոր)**:

11. Ա- 4; Բ- 6; Գ- 1; Դ- 5 (**յուր. 0.5 միավոր**)